

Եօթն ամիս շատ չարչաքանք թող քաշեմ,  
Հոգիս դալարի, մարմինո մաշեմ,  
Քանի որ շարչարուիմ որբունաք յիշեմ  
Քրիստոսի խաթեր, լուս հաւտիս համար:  
Խնձի մերկացուցին ձըկին մէկ պախչամ  
Լուսէղէն շապիկն այնտեղ հազուցին  
Տեսիք տարան, սուրբ գրախտը ցըրուցին,  
Քրիստոսի խաթեր, լուս հաւտիս համար:  
Յակոբ ազան դուռը դրախտին բացեց,  
Քեսաներն հեքիմներու դէմն լցեց  
Նահատակը մազէ շապկով պատնքեց  
Քրիստոսի խաթեր, լուս հաւտիս համար:  
Դւնիկեցի Վառվառ կուսի նահատակութիւնը կատարուել  
է ՌՄԿ—1810 թ. յուլիսի 16-ին և ինչպէս երեսում է, մեծ  
տպաւորութիւն է թողել ժողովրդի վերայ, որովհետեւ այդ նա-  
հատակութիւնը արձանագրում էն, ընդամակ և ստանաւոր,  
արժանահաւատ քաղաքացիներ Մատթէոս քհ., Հանէս վարժա-  
պետ (նօտար) և իշխան Յակովը Մամիկոնեանի որդի Կարա-  
պետը ( Հ. Ն. Վ. Հա. թ. Երես 225 ):

### Դալի-Բաբայի սեպագիր արձանագրութիւնը

Ոռւսական Բասենի Աթլհան գիւղացի Պ. Կիրակոս  
Տէր Աղէքսանդրեանից իմանալով, որ ոռոսական սահմանից  
4 ժամ կամ մօտ 40 վերստ հեռաւորութեամբ, Էրզրումի  
վիլայէթի Դալի-Բաբա գիւղի եկեղեցու աւազանի մօտ,  
որմի մէջ դրուած է մի սեպագիր արձանագրութիւն,—  
խնդրեցի նոյն պարոնին այդ արձանագրութեան ընդօրի-  
նակութիւնը էստամպաժով կամ լուսանկարով ուղարկել  
։ Էջմիածին, ուր նոյնպիսի արձանագրութիւնների մեծ  
հաւաքածու կայ։

Պ. Կ. Տէր Աղէքսանդրեանը յայտնում է, որ փետր-  
վարի 3-ին գնացել է Դալի-Բաբա, կամեցել է էստամպա-  
ժով սեպագրի ընդօրինակութիւնը վերցնել. բայց չէ յաջո-  
ղել որովհետեւ, գրում է նա. «Ղմբաղգաբար չը գտնուեցին  
ծծան թուղթ և ուրիշ թղթեր, Երևկայեցէք 150 ծիից բազ-  
կացած մի հայտնակ գիւղ, ուր նստում է գաւառի միւ-

տիրը, կան 8 հատ առեւտրական խանութիւնը, պօստ-հեռագրատուն և միացեալ ընկերութեան գպրոցը և չի ճարտում ծծան թուղթ, կարող էք գաղափար կազմել, թէ ամենայն ինչ կատարեալ է»:

Պ. Կ. Տէր Աղէքսանդրեանը տեղական Անտօն քահանայ թուխիկեանի և պ. Յակովը ջուտեանցի հետ մտնում է եկեղեցի և նրանց աջակցութեամբ, մեծ զգուշութեամբ մատիտով ընդօրինակում է արձանագրութիւնը:

Գիւղի ծերունիների տսելով արձանաքարը Դալի-Բաբայի մօտիկ Բօղազ կոչուած տեղի հին աւերակ եկեղեցու քարերից է, և իբրև սրբութիւն բերուել գրուել է Դալի-Բաբայի եկեղեցու աւագանի մօտ, որմի մէջ:

Ես յանձնարարել էի պ. Կ. Տէր Աղէքսանդրեանին, որ Դալի-Բաբայից երկու ժամ՝ հեռաւորութեամբ, քրդաբնակ եազի-դաշ գիւղի մօտ, ժայռի վերայի սեպագիր արձանագրութիւնն ես ընդօրինակի և ուղարկի, այս առիթով նա դրում է. «Զը կարողացայ գնալ, թէ ձմեռ էր և թէ տեղացիների ասելով գրութիւնը գետնի մակերեսից մօտաւորապէս երեք արշին բարձր, ժայռի վերայ. հարկաւոր է փայտ և տախտակ բարձրանալու համար, Քրդական մի փոքրիկ գիւղում ես չը պիտի կարողանայի ձեռք բերել հարկաւոր իրերը»:

Յոյս ունիմ, որ դիպող ժամանակին պ. Կ. Տէր Աղէքսանդրեանը Եազի-դաշի արձանագրութեան ընդօրինակութիւնն էլ կուղարկի:

Խորին շնորհակալութիւն պ. Կ. Տէր Աղէքսանդրեանին նրա կրած նեղութիւնների համար, Դալի-Բաբայի արձանագրութեան առիթով:


Դալի-Բաբայի արձանագրութիւնը ինն առղ է. Լայնութիւնը ըստ պ. Կ. Տէր Աղէքսանդրեանի՝ մի և կէս արշին, երկարութիւնը անյայտ, որովհետեւ պատի մէջ է:

Ահա այդ սեպագիր արձանագրութիւնը, որ տպում ենք Արարատում, Մայր Աթոռիս միաբան Դալուստ Տէր Մկրտչեանի ծանօթութեամբ:

Ծանօթութիւն.—«Այս տպագիրը (պ. Կ. Տէր Աղէքսանդրեանի պատճենը) միայն մօտաւոր գաղափար է տալիս. ճիշտ օրինակն ունենալու համար անհրաժեշտ է կամ բեւեռագրագէտի ընդօրինակութիւն, կամ լուսանկար և կամ էստամպաժ».

Արձանագրութիւնը իսպուխնիսի որդի Մենուաս թագաւորինն է, որ նստում էր Տոսպ քաղաքում, շուրջ 810—778 թ. Քրիստոսից առաջ. կայ յիշատակութիւն պալատի շինութեան, կամ նորոգութեան մասին. Մեր տպարանի ունեցած միջոցներով հազիւ թէ կարելի լինի ճիշտ շարել. իբրև նմուշ տալիս եմ ամբողջի ընթերցուածը, ուղղելով ուսումնասէր պարոնի ընդօրինակուրթեան անհնարին տեղերը, հարկաւ ենթագրաբար».

1. (Աստուած) Խալ-դի-նի-նի ուշ-մա-շի-նի
2. (մարդ) Մե-նու-ա-շէ (մարդ) իշ-պու-ու-նի-սի-նի-շէ
3. ի-նի (պալատ) շի-դի-իշ-տու-նի
4. բա-դու-սի-է (Աստուած) մե (Խալ?) -դի-նի-նի
5. ալ-սու-ի-շի-նի (մարդ) Մե-նու-ա-նի
6. (մարդ) իշ-պու-ու-ի-նի-է-սի
7. (թագաւոր հզօր) (թագաւոր) ալ-սու-ու-ի-նի
8. (թագաւոր երկրին) Բի-ի-ա-ի-նա-ա-ու-է
9. ա-լու-սի (քաղաք) Թու-ուշ-պա-ա (քաղաք)  
Գաղափարագերի նշանակութիւնը դրուած է փակտ-գծերի մէջ»:



ԴԱԼԻ—ԲԱՐԱՅԻ ՍԵՊԱԶԵՒ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

